ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2359-Ա/2 «15» դեկտեմբերի 2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԵՐ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022 թվականի փետրվարի 18-ի N 05-Լ հրամանով հաստատված կարգի 8-րդ կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Արմավիրի մարզի «Սարդարապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված «Ազգային ծեսեր» խմբակի ծրագիրը երաշխավորել գործածության:

12/14/2022

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Digitally signed by SMBATYAN KARINE 5105780205
Date: 2023.09.30 23:59:13 AMST

Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղի միջն. դպրոցի

«Ազգային ծեսեր»

խմբակի ծրագիրը:

Շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 60 ժամ

ՈՒսուցչուհի՝ Ա. Պապյան

2023-2024

Ծրագիր

Երեխայի ներդաշնակ, հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով : Ծեսը լայն տարածում ունի, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով սերնդեսերունդ փոխանցված մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում կրթօջախը:

Դպրոցում խմբակի վարման նպատակն է՝ ծեսերին նոր կյանք տալը, սովորեցնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Սովորողները լավ կիմանան երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Խմբակի շրջանակներում սաները կիմանան, թե ո՞ր ծիսական նախագծերն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել, ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև:

Խմբակի գործունեության հիմնական ձևերը կիրականացվեն խաղի միջոցով: Խաղը երեխայի կյանքում գրավում է առաջին տեղը: Ուրեմն սովորողներն էլ խաղի միջոցով կարող են ներառվել, դառնալ ծիսական միջավայրի մասնիկը: Խմբակի ընտրությունը պատահական չէ, ազգային ծեսերը, ծիսական, ազգային խաղերը, արդյունավետ են մանկան զարգացման համար: Սովորողները, ազգային ծեսը խաղարկելիս, կծանոթանան ազգային խաղերին, կսովորեն նոր խաղեր և կնպաստեն դրանց տարածմանը, զարգացմանը:

Ազգային ծեսեր, տոներ, նկարագրություն

«Բերքի տոն» ուսումնական նախագիծ

- **Թեմա՝** <<Ազգային ծեսեր, տոներ >>
- **Ժամաքանակ՝** 5 ժամ

Նպատակը՝

- կպատրաստեն ծիսական պարագաներ,կխաղան ծիսական խաղեր:
- խմբակի շրջանակներում աշակերտները կգնան ուսումնական ճամփորդության:
- կբեմականացնեն ծիսական երգեր:

Ինչ խնդիրներ են լուծվում՝

- նյութի յուրացում
- կարողությունների դրսևորում
- խոսքի զարգացում
- տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեք բերում, մշակում (լեզվական, թատերական, ձեռարվեստ):

Գրական՝ գեղարվեստական ճաշակի զարգացում, ինքնադրսևորում

Այս աշխատանքները նպաստում են աշակերտների բառապաշարի հարստացմանը, մտածողության ձևավորմանը, ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը: Ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ:Զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երժշտություն):

Կիմանան՝

- Ազգային ծեսը, ազգային սովորույթները, հայկական ժողովրդական և ծիսական երգերը, ծիսական կերպարները, ժողովրդական մանկական, ծիսական խաղերը, ծիսական կերակրատեսկները, ծիսական պարագաները:

Աշակերտները **կկարողանան՝**

- երգել մանկական ծիսական երգեր, պատրաստել ծիսական պարագաներ, խաղալ ժողովրդական մանկական ծիսական խաղեր:

Աշակերտները **կլինեն**

- ծեսը իմացող ակտիվ մասնակիցները և տարածողները:

Բովանդակություն՝

- **Թեմա՝** <<Ազգային ծեսեր, տոներ >> տեղեկատվական զրույց
- **Ժամաքանակ** 1 ժամ

- **Թեմա՝** Կրթական ծրագրերի փոխանակում
- **Ժամաքանակ՝** 1 ժամ
- **Նպատակը՝** Կրթական ծրագրերի փոխանակում, գիտելիքների զարգացում, ամրապնդում, կողմնորոշում տեղանքում, հայրենիքի տեսարժան վայրերի բացահայտում, նոր ընկերների ձեռքբերում, ազգային երգերի, ծեսերի, ավանդույթների, սովորույթների փոխանցում, տարածում, ամրապնդում:

- **Թեմա՝** ոտանավորի ուսուցում՝ Կոմիտաս « Աշունք»
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** նկարել « Աշնան օր»
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** բերքի մշակում
- **Ժամաքանակ՝** 1 ժամ
- **Նպատակը՝** Շրջագայություն Սարդարապատ գյուղով «Բերքի տոնի» շրջանակներում այցելություն չրագործներին, խաղողագործներին. գինեգործներին:

Հյուսում ենք ճակտոցներ և գոտիներ

- **Թեմա՝** Հյուսում ենք ճակտոցներ և գոտիներ
- **Ժամաքանակ՝** 3 ժամ

Ընթացքը՝ խմբակի աշակերտները պատրաստում են ազգային զարդանախշերով ճակտոցներ և գոտիներ , որոնցով հետո աշակերտները մասնակցելու են <<Բերքի տոնի>> միջոցառմանը,միջոցառմանը կատարելով ազգային երգեր և պարեր: Բեմադրության ընթացքում աշակերտները խաղացնելու են իրենց պատրաստած Նուրի տիկնիկը և երգելու են Նուրիի համար երգեր:

Նպատակը՝

- սեփական հմտություններն ու փորձը փոխանցելու կարողության զարգացում:

- թիմային աշխատանքի կարողության զարգացում:
- երևակայության և ձեռքի հմտությունների զարգացում:

Անհրաժեշտ նյութեր՝

- գունավոր ֆետրեր
- գունավոր թելեր
- Ժապավեններ
- սոսինձ
- մկրատ

Խնդիրներն են՝

- տեղեկությունների ձեռք բերում ու կիրառում
- ստեղծագործական երևակայության զարգացում
- տեխնոլոգիական հմտությունների զարգացում
- համագործակցային հմտությունների զարգացում

Բովանդակություն՝

- **Թեմա՝** Հյուսում ենք ճակտոցներ
  - **Ժամաքանակ՝** 2 ժամ

  - **Թեմա՝** Հյուսում ենք գոտիներ
  - **Ժամաքանակ՝** 1 ժամ

«Խաղողածես» ուսումնական նախագիծ

- **Թեմա՝«Խաղողածես»**
- **Ժամաքանակ՝** 7 ժամ

Նպատակը և խնդիրները՝

- կծանոթանան խաղողի տեսակներին:
- կսովորեն խաղողաքաղի և խաղող ճզմելու ծիսական երգեր:
- կիմանան օրհնանքներ ,ասացվածքներ խաղողի մասին:

- կկարողանան պատրաստել չամիչ։
- կծանոթանան ժողովրդական, մանկական, ծիսական խաղերին։

Նախապատրաստական փուլ՝

- ուսումնասիրում ենք խաղողի տեսակները, գույները։
- ռադիոլուրի ստեղծում, խաղողահավաք ծնողներից։
- ծիսական արարողություն՝ խաղողազովք, խաղողօրհնեք։
- խաղողքաղի և խաղող ճզմելու ծիսական երգեր՝ «Էկեք ճզմենք քաղցր խաղող», «Քաղենք խաղողը» շարք։

Բովանդակություն՝

- **Թեմա՝ «Խաղողածես»** տեղեկատվական զրույց
  - **Ժամաքանակ՝** 1 ժամ

  - **Թեմա՝** «Քաղենք խաղողը»
  - **Ժամաքանակ՝** 1 ժամ

  - **Թեմա՝** Օրհնանքների, ասացվածքների ուսուցում խաղողի մասին
  - **Ժամաքանակ՝** 1 ժամ

  - **Թեմա՝** Խաղողանկարչություն
  - **Ժամաքանակ՝** 1 ժամ

  - **Թեմա՝** «Բաղը քաղինք»
  - **Ժամաքանակ՝** 1 ժամ

  - **Թեմա՝** ոտանավորի ուսուցում
  - **Ժամաքանակ՝** 1 ժամ

  - **Թեմա՝** չամիչի պատրաստում , Ազգային-ծիսական խաղիկ՝ «Մամի, մամի, խաղողը հասել է»
  - **Ժամաքանակ՝ 1 ժամ**

«Հացթխիկ» ուսումնական նախագիծ

- **Թեմա՝** « Հացթխիկ»
- **Ժամաքանակ՝** 7 ժամ

Նպատակ՝

- տարբեր աղբյուրներից կուսումնասիրեն հաց (լավաշ) թխելու արարողակարգը
- կիմանան հացահատիկի, ջրաղացի, թոնրի պատմության, լավաշի մասին, հացի օգտակարության, կարևորության մասին:
- կսովորեն համապատասխան երգեր, պարերգեր, պարեր:

Խնդիրներ՝

- խաղերգեր ուսուցում, կատարում,
- Ինքնաշեն շրխկան նվագարաններ ստեղծում
- խաղով, բնական շարժումով երգի յուրացում
- բնական շարժումով երգերի բեմադրություն
- խաղերգերի տեսագրում, ձայնագրություն, համերգ:

Ընթացքը՝

- շրխկան, ինքնաշեն և տարբեր շրխկաններով երգերին նվագակցելու հմտությունների ստեղծում
- ծանոթանալ խաղերգերին, նրանից բխող շարժումներով ստեղծել խաղային միջավայր
- տեսագրել խաղերգերը
- պատրաստել համերգային հագուստներ, խաղերգին բնորոշ աքսեսուարներ

Արդյունքում աշակերտները՝

- կիմանան խաղերգերը,
- կկարողանան երգել և խաղալ
- կլինեն ազգային մշակույթը կրողը, փոխանցողը:

Բովանդակություն՝

- **Թեմա՝** « Հացթխիկ» տեղեկատվական զրույց
    - **Ժամաքանակ՝** 1 ժամ

    - **Թեմա՝** <u>հայկական լավաշ</u>
    - **Ժամաքանակ՝** 1 ժամ
    -
    - **Թեմա՝** մուլտֆիլմի դիտում « <u>Կախարդական լավաշը</u>»
    - **Ժամաքանակ՝** 1 ժամ

    - **Թեմա՝** « ՋԱՂԱՑԻ ԵՐԳԸ»
    - **Ժամաքանակ՝** 1 ժամ

    - **Թեմա՝** պատրաստել ցորենի հասկ
    - **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** Հայկական սովորույթներ. հացի, լավաշի ու թոնիրը մասին : Առած-ասացվածքներ աշխատանքի,աշխատասիրության, վերաբերյալ։
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** ոտանավորի ուսուցում
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

«Ազգային նվագարաններ, շրխկաններ» նախագիծ

- **Թեմա՝** «Ազգային նվագարաններ, շրխկաններ»
- **Ժամաքանակ՝** 3 ժամ

Երաժշտությունը արվեստների մեջ էն կախարդ ուժն է, որ անմարմին արտահայտություններով կարողանում է անմիջականորեն և միանգամից տիրել մարդու բովանդակ գոյությունը,նրա մարմնին ու հոգուն և տիրաբար տանել ուր որ կամենա:

Հովի. Թումանյան

Նպատակը՝

- կսովորեն նոր շրխկան գործիքների պատրաստում,
- կիմանան ազգային նվագարանի մասին,
- կձևավորվի ազգային նվագարանի և շրխկանների համույթ:

Խնդիրներ՝

- ռիթմիկ զգացողության զարգացում,
- պարերգերի, երգերի երաժշտական ուղեկցում շրխկաններով,
- տեսադասի ստեղծում:

Աշակերտները՝

- կկարողանան որոշ չափով տիրապետել որևէ ազգային նվագարանի,
- ավելի լավ կպատկերացնեն ռիթմիկ պատկերները,
- ընդհանուր պատկերացում կկազմեն նվագակցելու մասին,
- կկարողանան նվագակցել:

Բովանդակություն՝

- **Թեմա՝** Շրխկանների պատրաստում
- **Ժամաքանակ՝** 2 ժամ

- **Նախագծի ամփոփում՝** «Բերքի տոն»
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

«Ամանորի ծես» ուսումնական նախագիծ

- **Թեմա՝** Ամանորի ծես
- **Ժամաքանակ՝** 6 ժամ

Նպատակը՝

- կՃանաչեն ծեսը։
- կսովորեն ծեսին բոնորոշ, երգերը, պարերը, բարեմաղթանքները և այլն
- կծանոթանան ամանորյա ճաշատեսակներին։
- կդառնան ծեսի կրողը և փոխանցողը։

Խնդիրներ՝

- Ծանոթանալ ծեսի պատմությանը և առանձնահատկություններին;
- Պատրաստել ծիսական չարխափաններ, շրխկաններ։
- Սովորել ծիսական երգերը, պարերգերը, պարերը՝ ըստ տարիքային առանձնահատկությունների։
- Սովորել պատրաստել ամանորյա ուտեստներ։

Բովանդակություն՝

- **Թեմա՝** Նոր տարին նշելու սովորույթը: Տեղեկություններ :
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

- **Թեմա՝** ամանորյա խաղալիքների պատրաստում
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** երգ-ուսուցում«Բասեն բարի»
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** տոնական բացիկների պատրաստում
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** ամանորյա ծիսական ուտեստներ։ Զրույց։
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** Պասուց դոլլմայի պատրաստում
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

«Բարեկենդանի ծես» ուսումնական նախագիծ

- **Թեմա՝** Բարեկենդան, փորեկենդան

- **Ժամաքանակ՝** 7 ժամ

Նպատակը՝

- կուսումնասիրեն Բարեկենդանի ծեսը, կառանձնացնեն ծիսական գործողություններն ու խաղերը։
- կխաղան ազգային խաղեր, կներկայացնեն փոքրիկ խաղիկներ։
- ազգային ծիսական ավանդույթների փոխանցում

Խնդիրներ՝

- ազգային ծիսական երգերի, խաղերգերի ուսուցում
- ծիսական խաղերի ուսուցում,
- ազգային պարային երաժշտության ուղեկցությամբ կատակ խաղ-պարերի կատարում,
- Բարեկենդանի ներկայացում, ներկայացման երաժշտական ձևավորում։

Արդյունքը՝

- ծիսական երգերի, խաղերգերի, պարերգերի ուսուցում
- ծիսական պարագաների պատրաստում
- Աշակերտները կլինեն ազգային մշակույթը կրողն ու փոխանցողը։

Բովանդակություն՝

- **Թեման** ՝ «Բարեկենդան» Տեղեկություններ :
- **Ժամաքանակ** ՝1 ժամ

- **Նպատակը** ՝ Ազգային խաղերի յուրացում։ Բովանդակության ծանոթացում
- **Ժամաքանակ** ՝ 1 ժամ

- **Թեմա՝** դիմակների պատրաստում
- **Ժամաքանակ** ՝ 2 ժամ

- **Նպատակը** ՝ Նոր ավանդական խաղերի ճանաչում։ Ազգային խաղերի տարածում
- **Ժամաքանակ** ՝ 1 ժամ

- **Թեման՝** Ծիսական երգերի, պարերի, խաղերի յուրացում **«**Գնացեք, տեսեք»
- **Ժամաքանակ** ՝ 1 ժամ

- **Թեմա՝** «Բարեկենդան» դպրոցում «ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԾԵՍ» նախագծի իրականացում
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

«Հարության (Զատիկի) ծես ուսումնական նախագիծ

- **Թեմա՝** Զատկի ծես
- **Ժամաքանակ՝** 11 ժամ

Նպատակը՝

- կունենան տեղեկություններ Ծաղկազարդի մասին։
- կծանոթանան և կսովորեն Ծաղկազարդին նվիրված երգեր։
- կիմանան «Հարության (Զատիկի) ծեսին վերաբերվող տեղեկություններ։
- կձևավորվի գեղագիտական ճաշակ։

- Ազգային մշակույթի յուրացում։
- Ազգային ժառանգության փոխանցում։

Խնդիրներ՝

- ուսումնասիրել Սուրբ Հարության ծեսը, ծիսական միջավայրը,
- առանձնացնել ծիսական այն գործողությունները, ծիսական կերպարներին, որոնք առանցքային են, որոնց միջոցով իրականացվելու է ծեսը,
- յուրացնել ազգային, ծիսական երաժշտական նյութը,
- ուսումնական գործընթացը կազմակերպել դպրոցում, դրսում՝ այգում, դաշտում, այլ բնական միջավայրում։

Բովանդակություն՝

- **Թեմա՝** «Ծաղկազարդ» տեղեկություններ :
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

- **Թեմա՝** Ծաղկազարդին ընդառաջ «Ախ գարուն է»
- **Ժամաքանակը՝** 1 ժամ
-
- **Թեմա՝** Զատկի տոնին ընդառաջ
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

- **Թեմա՝** Զատկական կերակրատեսակներ
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

- **Թեմա՝** Զատկի տոնին ընդառաջ
- **Նպատակը՝** աշակերտները կպատրաստեն «Հարության (Զատիկի) ծեսին նվիրված պարագաներ։

- **Ժամաքանակը՝** 1 ժամ

- **Թեմա՝** Ինչպես ցանել Զատկի ցորենը
- **Նպատակը՝** աշակերտները կիմանան ինչպես ճիշտ և արագ ցորեն աճեցնել՝ Զատկի համար:
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

- **Թեմա՝** Զատկական երգեր. «Խնկի ծառը ծաղկել է»
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

- **Թեմա՝** Զատկական ձվիկների ձևավորում
- **Ժամաքանակը՝** 2 ժամ

- **Թեմա՝** Զատկի տոնին ընդառաջ
- **Նպատակը՝** աշակերտներին ծանոթացնել Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնին , որը նշվում է Զատիկը Հայ Առաքելական Եկեղեցում:
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

- **Թեմա՝** ԶԱՏԿԱԿԱՆ ԱՍԻԿՆԵՐ , Զատիկի ծես նախագծի իրականացում
- **Ժամաքանակը՝** 1 ժամ

«Անձրևաբեր և անձրևախափան» ուսումնական նախագիծ

- **Թեմա՝** «**Անձրևաբեր և անձրևախափան ծես**»
- **Ժամաքանակը՝** 11 ժամ

Նպատակ ը՝

- կուսումնասիրեն ջուրը՝ իր տարբեր դրսևորումներով (ջուր, գոլորշի, սառույց, տաք և սառը վիճակներ)։
- կուսումնասիրեն անձրևաբեր և անձրևախափան ծեսերին նվիրված գրառումները։
- կիմանան ջրի (անձրևի)կարևորությունը, անհրաժեշտությունը բնության մեջ, մարդու կյանքում։

Արդյունքը՝

- ծիսական երգերի, խաղերգերի, պարերգերի ուսուցում։
- ծիսական պարագաների պատրաստում։
- ծիսական կերպարների ուսումնասիրում։
- աշակերտները կլինեն ազգային մշակույթը կրողն ու փոխանցողը։

Խնդիրներ՝

- ծանոթանալ ծեսի պատմությանը և առանձնահատկություններին
- պատրաստել ծիսական ատրիբուտներ։
- սովորել ծիսական երգերը, պարերգերը։
- ուսումնական գործընթացը կազմակերպել դրսում՝ այգում, դաշտում, այլ բնական միջավայրում։

Բովանդակություն՝

- **Թեմա՝** «**Անձրևաբեր ծես**» տեղեկություններ **:**
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** տեղեկություններ **անձրևի, ջրի, արևի** մասին
- **Ժամաքանակ՝** 2 ժամ

- **Թեմա՝** երգ-պար «**Զրպիկ, զրպիկ**»
- **Ժամաքանակ՝** 2 ժամ

- **Թեմա՝** ոտանավորի ուսուցում «Եկավ անձրև կաթիլ-կաթիլ»
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** զրույց անձրևի նշանակության մասին։
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** նկարչություն «ՈՒրախ անձրև» թեմայի շուրջ

- **Ժամաքանակ՝** 1 ժամ

- **Թեմա՝** պատրաստել ծիսական տիկնիկներ
- **Ժամաքանակ՝** 2 ժամ

- **Թեմա՝** «**Անձրևաբեր ծես**» նախագծի իրականացում
- **Ժամաքանակ՝** 1 ժամ

Սկզբնաղբյուրների ու գրականության ցանկ

1. **Հրանուշ Խառատյան՝** «Հայ ժողովրդական տոներ» ,Երևան 2005 :

2. **Սամվել Մկրտչյան՝** «Տոներ, ծեսեր», Երևան 2010 :

Համացանցային կայքեր

1. https://tevanyanseda.home.blog/2020/06/27/%D5%A1%D5%B6%D5%B1%D6%80%D6%87%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80-%D6%87-%D5%A1%D5%B6%D5%B1%D6%80%D6%87%D5%A1%D5%AD%D5%A1%D6%83%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%E2%80%A4-%D5%B6%D5%A1%D5%AD/ (28.07.2022)
2.
3. https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/06/%D4%B9%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80-%D5%80%D5%A1%D5%B5%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6-%D4%B1%D5%B6%D5%B1%D6%80%D6%87%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80-%D6%87- (08.09.2022) (08.09.2022)
4. %D5%A1%D5%B6%D5%B1%D6%80%D6%87%D5%A1%D5%AD%D5%A1%D6%83%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A5%D6%80%D5%AF%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%A4%D5%AB%D6%80.pdf (28.07.2022)
5. https://marinemkrtchyan.wordpress.com/category/%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80/ (28.07.2022)